ՀԿԴ/0149/01/24
(ՍԴ3/0053/01/21)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 օգոստոսի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահին փոխարինող Ելիզավետա Դանիելյանս, ուսումնասիրելով թիվ ՀԿԴ/0149/01/24 (ՍԴ3/0053/01/21) քրեական վարույթի ընդդատության մասին վեճը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 8-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի սեպտեմբերի 22-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացվել է թիվ 41154620 (ՍԴ3/0053/01/21) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Դերենիկ Հայկազի Համբարձումյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի հունվարի 18-ի դատավճռով Դերենիկ Համբարձումյանը մեղավոր է

ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ Դերենիկ Համբարձումյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանվելով փորձաշրջան 3 (երեք) տարի ժամկետով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի հունիսի 29-ի որոշմամբ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի հունվարի 18-ի դատավճիռը բեկանվել է և վարույթը փոխանցվել է նույն դատարան՝ նոր քննության:

1.1. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 13-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0053/01/21 քրեական վարութը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հուլիսի 25-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի օգոստոսի 8-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0149/01/24 (ՍԴ3/0053/01/21) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության մասին վեճը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի օգոստոսի 8-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ Դերենիկ Հայկազի Համբարձումյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, այն բանի համար, որ նա *«(…) աշխատելով «Ռեդինետ» ՓԲ ընկերությունում որպես էլեկտրիկ և ընկերության կողմից լիազորված լինելով անհրաժեշտության դեպքում ձեռք բերելու և*

լիցքավորելու «ՄՏՍ-Հայաստան» ՓԲ ընկերությանը պատկանող կայանների դիզելային գեներատորները, 2017 թվականի ապրիլի 18-ից մինչև 2020 թվականի մարտի 19-ն ընկած ժամանակահատվածում, հափշտակություն կատարելու միասնական դիտավորությամբ, վերոնշյալ գեներատորները լիցքավորելու պատրվակով, Կապանում գործող բենզալցակայաններից ստացել է առանձնապես խոշոր չափերի՝ 14 340 937.3 ՀՀ դրամ արժողությամբ 32439 լիտր դիզելային վառելիք և յուրացման եղանակով հափշտակել:

Այսպես.

«Ռեդինետ» ՓԲ ընկերությունը 2017 թվականի ապրիլի 13-ին «Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերության հետ կնքած ցանցի սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ իրականացրել է կայանների սպասարկման ծառայություն, որի մեջ ներառվել է կայանների դիզելային գեներատորների լիցքավորումը, իսկ Դերենիկ Համբարձումյանը, աշխատելով «Ռեդինետ» ՓԲ ընկերությունում որպես էլեկտրիկ և ընկերության կողմից լիազորված լինելով անհրաժեշտության դեպքում ձեռք բերելու և լիցքավորելու «ՄՏՍ-Հայաստան» ՓԲ ընկերությանը պատկանող կայանների դիզելային գեներատորները, 2017 թվականի ապրիլի 18-ից մինչև 2020 թվականի մարտի 19-ն ընկած ժամանակահատվածում, հափշտակություն կատարելու միասնական դիտավորությամբ, վերոնշյալ գեներատորները լիցքավորելու պատրվակով, Կապանում գործող բենզալցակայաններից ստացել է 14 340 937.3 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 32439 լիտր դիզելային վառելիք, որը դուրս բերելով ընկերության գույքային ֆոնդից և չկատարելով պայմանագրով սահմանված ընկերության պարտավորությունները, յուրացման եղանակով հափշտակել է (…)»[1]:

5. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն քրեական վարույթով մեղադրական եզրակացությունից, ինչպես նաև մեղադրյալ Դերենիկ Հայկազի Համբարձումյանին որպես մեղադրյալ ներգրավելու և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումներից*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթ 249:

ակնհայտ է, որ Դերենիկ Հայկազի Համբարձումյանին մեղսագրվել է կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցավոր արարքի կատարում, ինչի մասին է վկայում այն, որ մեղադրյալին առաջադրված մեղադրանքում նշված է, որ նա ենթադրյալ հանցավոր արարքը կատարել է «Ռեդինետ» ՓԲ ընկերության կողմից լիազորված լինելով՝ անհրաժեշտության դեպքում ձեռք բերելու և լիցքավորելու «MSU-Հայաստան» ՓԲ ընկերությանը պատկանող կայանների դիզելային գեներատորները, այսինքն՝ հանցանքը կատարել է իր ծառայողական լիազորություններն օգտագործելով:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասում որպես որակյալ հատկանիշ նախատեսվել է միայն հիշյալ հանցանքը պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը, սակայն դա ամենևին չի նշանակում, որ սույն ենթադրյալ հանցավոր արարքն այս պահին՝ քրեական վարույթը դատարան ուղարկելիս և դատարանում քննության առնելիս, չունի կոռուպցիոն բնույթ, միայն այն պատճառաբանությամբ, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի գործողության ընթացքում ենթադրյալ արարքը կատարվել է ծառայողական լիազորություններն օգտագործելով, որը ըստ նույն օրենսգրքի հավելված 6-ի՝ չի հանդիսացել կոռուպցիոն հանցագործություն:

Ի տարբերություն 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի՝ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածում որպես որակյալ հատկանիշ է նախատեսվել հանցանքը ծառայողական լիազորություններն օգտագործելու միջոցով կատարելը, որն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ի՝ դասվում է կոռուպցիոն հանցագործությունների շարքին (…)»[2]:

6. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Մեղադրյալին ներկայացված մեղադրանքի բովանդակության ուսումնասիրության արդյունքում Դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից սույն քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկելու մասին 2024 թվականի հուլիսի 25-ին կայացված*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 13, թերթեր 147-150:

որոշմամբ արտահայտված այն դիրքորոշմանը, որ սույն քրեական վարույթով մեղադրական եզրակացությունից, ինչպես նաև մեղադրյալ Դերենիկ Հայկազի Համբարձումյանին որպես մեղադրյալ ներգրավելու և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումներից ակնհայտ է, որ Դերենիկ Հայկազի Համբարձումյանին մեղսագրվել է կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցավոր արարքի կատարում, ինչի մասին է վկայում այն, որ մեղադրյալին առաջադրված մեղադրանքում նշված է, որ նա ենթադրյալ հանցավոր արարքը կատարել է «Ռեդինետ» ՓԲ ընկերության կողմից լիազորված լինելով՝ անհրաժեշտության դեպքում ձեռք բերելու և լիցքավորելու «ՄՏՍ-Հայաստան» ՓԲ ընկերությանը պատկանող կայանների դիզելային գեներատորները, այսինքն՝ հանցանքը կատարել է իր ծառայողական լիազորություններն օգտագործելով:

Դատարանի վերը նշված անհամաձայնության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում անձի կողմից իր լիազորությունների գործադրմամբ իրեն վստահված գույքը հափշտակելու բոլոր դեպքերում արարքը պետք է որակել որպես ծառայողական լիազորությունները օգտագործելով վստահված գույքի հափշտակություն: Այսինքն, նման մոտեցման պարագայում ստացվում է մի իրավիճակ, որ որևէ անձի երբևէ չի կարող մեղսագրվել վստահված գույքի հափշտակության հասարակ հանցակազմի կատարում, ինչը ոչ միայն չի բխում առկա օրենսդրական ձևակերպումներից, այլև հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումներին:

(…)

Բացի այդ Դատարանն արձանագրում է, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես հանցակազմի որակյալ հատկանիշ է նախատեսվել հանցանքը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելը, որը շատ ավելի լայն հասկացություն է, քան նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված պաշտոնեական դիրքն օգտագործելը: Այսինքն՝ Դատարանը փաստում է, որ նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքը չի կարող յուրաքանչյուր

դեպքում մեխանիկորեն համապատասխանեցվել գործող ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին: Համապատասխանեցում կարելի է կատարել միայն այն դեպքում, երբ անձին ներկայացվել է մեղադրանք պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացում կատարելու համար: Հակառակ մոտեցման պարագայում հետադարձ ուժ կտրվի անձի վիճակը վատթարացնող օրենքին, ինչն ուղղակի արգելված է թե՛ Սահմանադրությամբ, թե՛ ՀՀ քրեական օրենսգրքով:

Սույն դեպքում Դատարանն արձանագրում է, որ Դերենիկ Հայկազի Համբարձումյանին ներկայացված մեղադրանքում առկա չէ որևէ ձևակերպում առ այն, որ վերջինս իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքը կատարել է պաշտոնեական դիրքն օգտագործելով, մինչդեռ Դատարանը պարտավոր է վարույթի քննությունն իրականացնել անձին ներկայացված մեղադրանքի սահմաններում:

Ընդ որում, Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Դերենիկ Հայկազի Համբարձումյանին ներկայացված մեղադրանքում առկա չէ նաև որևէ ձևակերպում իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքը ծառայողական լիազորությունները օգտագործելով կատարելու վերաբերյալ, իսկ անձին ներկայացված մեղադրանքում պետք է հստակ ձևակերպվի ինչպես վերջինիս մեղսագրվող ենթադրյալ արարքը, այնպես էլ բոլոր ծանրացնող հանգամանքները:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0149/01/24 (ՍԴ3/0053/01/21) քրեական վարույթը ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ այն նախկին ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 6-ով կամ գործող ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ չէ (…)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 13, թերթեր 166-171:

ՀԿԴ/0149/01/24 (ՍԴ3/0053/01/21) քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին՝ փաստելով, որ Դ.Համբարձումյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունից երևում է, որ վերջինս ենթադրյալ արարքը կատարել է «Ռեդինետ» ՓԲ ընկերության կողմից իրեն վերապահված՝ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲ ընկերությանը պատկանող կայանների դիզելային գեներատորները անհրաժեշտության դեպքում ձեռք բերելու և լիցքավորելու լիազորություններն օգտագործելու եղանակով[7]:

- Հակակոռուպցիոն դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին որոշմանը՝ փաստելով, որ Դերենիկ Համբարձումյանին ներկայացված մեղադրանքում առկա չէ որևէ ձևակերպում առ այն, որ վերջինս ենթադրյալ հանցանքը կատարել է *«պաշտոնեական դիրքը»* կամ *«ծառայողական լիազորությունները»* օգտագործելու եղանակով[8]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Դ. Համբարձումյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից պարզ է դառնում, որ վերջինս, աշխատելով «Ռեդինետ» ՓԲ ընկերությունում որպես էլեկտրիկ և ***ընկերության կողմից լիազորված լինելով անհրաժեշտության դեպքում ձեռք բերելու և լիցքավորելու «ՄՏՍ-Հայաստան» ՓԲ ընկերությանը պատկանող կայանների դիզելային գեներատորները***, ենթադրաբար կատարել է յուրացման եղանակով առանձնապես խոշոր չափերի հափշտակություն:

---

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Այլ կերպ՝ Դ.Համբարձումյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունը հիմք է տալիս փաստելու, որ վերջինս ենթադրյալ հափշտակությունը կատարել է՝ օգտագործելով «Ռեդինետ» ՓԲ ընկերության կողմից իրեն վերապահված լիազորությունները, որպիսի ենթադրյալ արարքն իր բնույթով կոռուպցիոն է: Հետևաբար, գտնում ենք, որ առկա է սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու հիմքը:

14. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ հիմքեր չկան չհամաձայնելու Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դիրքորոշմանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասով՝ *«պաշտոնական դիրքն օգտագործելով»* որակյալ հատկանիշը նախատեսված լինելու պայմաններում նույնպես Դ.Համբարձումյանին վերագրվող ենթադրյալ հանցանքն իր բնույթով համարվում է կոռուպցիոն: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված՝ *«պաշտոնատար անձի»* հասկացությունը կիրառելի է նույն օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների պարագայում և չի կարող նույնացվել օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ *«պաշտոնական դիրք»* եզրույթի հետ:

15. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0053/01/21 (ՀԿԴ/0149/01/24) քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

16. Վերոգրյալի հիման վրա և ելնելով արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությունից, գտնում ենք, որ թիվ ՍԴ3/0053/01/21 (ՀԿԴ/0149/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Դերենիկ Հայկազի Համբարձումյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ՀԿԴ/0149/01/24 (ՍԴ3/0053/01/21) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԵԼԻԶԱՎԵՏԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ